

ԱՆՁՆԱՎՈՐՄԱՆ ՈՃԱԿԱՆ ՀՆԱՐԱՆՔԸ ՎԱՅԱՆ
ՏԵՐՅԱՆԻ ՉԱՓԱԾՈՅՈՒՄ

Անձնավորումը փոխաբերության մի տարատեսակ է, որով իրերին, երևույթներին և կենդանիներին վերագրվում են մարդկային հատկանիշներ, շեշավորներին բնորոշ յուրահատկություններ: Խոսքի պատկերավորման այս միջոցը կապված է մարդկանց հնագույն մտածողության հետ և գործածվել է ինչպես հայկական ժողովրդական բանահյուսության մեջ, այնպես էլ հայ գրականության տարբեր շրջաններում:

Անձնավորումը Տերյանի չափածոյի խոսքարվեստին բնորոշ գեղարվեստական հնարանք է: Գեղարվեստական էլակետը այս դեպքում բնությունն է՝ միջևորդավորված քնարական անհատի վերաբերմունքով, իսկ նպատակը՝ մարդու ներաշխարհի բացահայտումը, հոգևոր էության արտացոլումը:

Բնությունը գեղեցիկ է իր բազմաթիվ դրսևորումներով, սակայն բանաստեղծության նյութ է դառնում, ինչպես Տերյանն է ասում, սուբյեկտիվ ճանապարհով, երբ ձուլվում է հոգու մեղեդուն և հնչում որպես հոգու նրբակերտ ձայն: Տերյանի քնարական հերոսի խոհի, ներապրումի թրթռումների անմիջական մասնակիցն է դառնում բնությունը: Նրա հետ ժպտում են կարկաչուն աղբյուրն ու պայծառ աստղերը, լալիս է գիշերվա հովը, դժկամ նայում են ժայռերը, երգում է քամին... Բանաստեղծը ոչ միայն շարժունակություն է հաղորդում բնության երևույթներին, այլև օժտում է մարդկային զգացմունքով ու բնավորությամբ: Բնությունը՝ այդ ինքնատիպ ու շեշտդ աշխարհը, Տերյանի խոսքում դառնում է շեշավորված- անձնավորված մի կերպար, որն իր գույների բազմազանությամբ ու հոգեբանական առումով նշանակալից բան է տալիս ցավի ու սիրո կենտրոնաձիգ հոսանքին՝ դառնալով բանաստեղծական եսի ինքնադրսևորման միջոց:

Երգում է քամին, լալիս է նորից,

Անհույս ու անվերջ մղկտում է նա.-

Այս մութ գիշերում այնքան կա թախիձ,

Այնքան տրտունջ ու գանգատ կա հիմա... (Գիշեր և հուշեր)

Ակնհայտ է անձնավորման գեղագիտական մեծ նշանակությունը դիտարկված բանաստեղծական հատվածներում: Քնարական հերոսի

դրամատիկ հոգեվիճակին համահունչ բնության պատկերները առավել արտահայտիչ են դարձնում գեղարվեստական խոսքը, ընդգծում բանաստեղծական ապրումը՝ մասնակցելով քնարական հերոսի հոգեվիճակի արտացոլման ոճական խնդրին:

Բնանկարը և քնարական հերոսի հոգեվիճակը ներդաշնակում են իրար, և տրամադրությամբ համահունչ են նաև ներքոհիշյալ բանաստեղծական հյուսվածքում.

Պարզ ջրի վրա եղեգը հանդարտ
Անդողողոջ կանգնած էլ չի շնջում.
Լոին խոկում են երկինք, գետ ու արտ
Եվ ոչ մի շարժում, ու ոչ մի շարժում...

(Մթնշաղի անուրջներ)

Բնությունը, անշուշտ, մարմնավորում է բանաստեղծի ներաշխարհը, նրա թախիծը, կարոտը, սերն ու մորմոքը: Բնության երանգների մեջ ցուլանում է նրա հոգին՝ ներանձնային հույզի լուսավոր ու անաղարտ առկայծումներով:

Անձնավորման անկրկնելի դրսևորումները Տերյանի լեզվում նաև մատնանշում են մարդու և բնության բարեկամության փիլիսոփայության վավերացումը, ինչպես՝

Ոչ, մենակ չեմ ես լեռներում,
Ծաղկունանց մեջ, երկնի մոտ,
Ոսկե մեզն է ինձ գուրգուրում
Երեկո ու առավոտ: (Անտիպ էջեր)

Տերյանը շնչավորել է երեկոն ու առավոտը, մեզն ու արևը, անգամ՝ տերևը: Բնության երևույթները բանաստեղծի ներապրումի վկաները չեն միայն, այլև նրա զրուցակիցները, հաճախ նաև՝ հույզի ու ապրումի անձնվեր կրողները:

Թովիչ քնքշությամբ հանգչող աշխարհում
Երեկոն վառեց լույսեր դժգունակ.
Մութը հյուսում է տրտմության ժանյակ,
Ծաղիկներն անուշ բույր են բուրվառում.
-Իմ սիրտը տրտում, իմ սիրտը մենա՛կ...

(Մթնշաղի անուրջներ)

Անձնավորված են ծաղիկները, մութը և երեկոն՝ օրվա այն պահը, որը համապատասխանում է բանաստեղծի բնավորությանը, հոգեվիճակին: Միանալով նրա հոգևոր շարժմանը՝ կիսախավարը

ներդաշնակում է բանաստեղծի թախծին, դառնում է հոգու ու բնության այն պայծառ զուգորդումներից մեկը, որը հավերժական երևույթ է կանքում:

Ոճագիտական գրականության մեջ տարբերակվում է անձնավորման երեք տեսակ՝ բարատնություն, երբ առարկային մարդկային բարք են վերագրում, դիմատնություն, երբ իրերն օժտվում են գործելու հատկությամբ, և կերպարատնություն, երբ անցյալի երևույթները կամ անգո հասկացությունները կերպարանավորվում են: Ակնհայտ է՝ Տերյանի բանաստեղծական խոսքում կիրառված անձնավորման օրինակները առավելապես դիմատնություններ են, որոնք դրսևորման բազմազան ձևեր ունեն: Հիմնականում գերակշռում է ստորոգյալով անձնավորումը, որն առհասարակ չարիածոյում ամենատարածված միջոցն է:

Քնքշաբույր ծաղկանց հրեղեն խաղով
Ժպտում են նորից անտառ ու ձորակ,

Եվ հեղեղները խոսուն - սառնորակ

Ողջունում են ինձ գվարթ ծիծաղով: (Մթնշաղի անուրջներ)

Կամ՝

Արդյոք հիշում ես, երկիրը պայծառ

Ժպտում էր սիրով հավիտենական,

Գարունն էր երգում ձայնով դյութական

Արդյոք հիշում ես, առու էր, անտառ... (Մթնշաղի անուրջներ)

Բերված օրինակներում ստորոգյալով արտահայտված անձնավորումը անշարժ իրերի ու երևույթների և մարդկային կյանքի շարժման ներդաշնակ զգացողություն է առաջացնում: Բառային միավորները վերածվում են գեղարվեստական խոսուն ու գունեղ սլատկերների, իսկ բնությունը՝ շարժումներով լի կյանքի:

Տերյանական խոսքում գործուն է նաև որոշիչներով արտահայտված անձնավորումը, որի միջոցով բնությունը դառնում է շնչող և արարող կենդանություն: Ահա այդպիսի օրինակներ՝

Կրակներն անձայն

Լացող ամպերի միգում անսահման

Թռչնեցի՜ն, անցա՜ն...

(Մթնշաղի անուրջներ)

Կամ՝

Հեռացիր աշուն համրորեն լացող,

Ողջույն քեզ, սրբիկ ահեղաշաչուն...

(Անտիպ էջեր)

Դժվար է երևակայել բնության դիմառնության ավելի խոսուն արտահայտություն: Քանաստեղծի աչքում շունչ ու հոգի են ստացել ամպերը, աշունը և մրրիկը: Իրար հաջորդող մարդակայնացած բնապատկերները մեկը մյուսից խոսուն են ու համոզիչ, դրսևորում են մարդկային անեզր հոգու մի կողմը, ներապրումի ու հույզի մի առկայծում:

Երբեմն էլ հատկացուցիչն է անձնավորվում իր բառային նշանակության մեջ անձին բնորոշ հասկացություն արտահայտող հատկացյալով, ինչպես՝

Հեռավոր մարդոց ցավերը կըզգամ,

Կարկաչող ջրի լացը կլսեմ... (Մթնշաղի անուրջներ)

Քանաստեղծի ցավին հաղորդակից են կարկաչուն ջուրն ու հողմի խենթ երգը: Դրանք դառնում են բանաստեղծի թախիծն ու կսկիծը արտահայտող լեզվական միջոցներ:

Որպես անձնավորման դրսևորման միջոց հանդես է գալիս կոչականը, օրինակ՝

Կապույտ երկնքի ոսկեդեն աստղեր,

Ձեր հեռվից դուք միշտ տեսնում եք նրան.

Ասացե՛ք, արդյոք նա էլ թախծում էր,

Արդյոք տրտում էր նա էլ ինձ նրման:

(Մթնշաղի անուրջներ)

Վերոհիշյալ գեղարվեստական պատկերում հավերժության և մարդկային կյանքի անցողիկության փիլիսոփայությունն առավել ներգործուն ու արտահայտիչ է դարձել աստղերի շնչավորման գեղարվեստական հնարանքով: Զարմանալի չէ, որ բնության անհասանելի ու ամենատես երևույթ - արարածները հանդես են գալիս որպես բանաստեղծի անխոս տառասլանքի վկաներ և կարող են նրան օգնել բացահայտելու պաշտելի էակի հոգեվիճակը:

Գեղագետ Տերյանը հաճախ է իր հայացքն ուղղում արարիչ բնությանը: Աստղերի ցուլի, ջրի կարկաչի, մեզի սլացքի ու թռչունների կանչի մեջ որսում է նուրբ ու հոգեպարար դաշնակներ:

Դիմառնության հրաշագեղ պատկեր է ներքոհիշյալ բանաստեղծական հատվածը.

Աստղը ջրին, ցողը ծաղկին,

Մեզը ծովին է փարվում,

Շողը մութին, հավթը հավթին

Կարոտագին համբարում... (Անտիպ էջեր)

Քնությունը մեզ ներկայանում է որպես սիրահար կերպարների մի թովիչ պատկերասրահ: Քանաստեղծն ուզում է, որ իր սիրած էակն ազատվի կյանքի սրտունջներից և համակվի բնության քնքուշ ու նուրբ զգացումներով:

Պատկերավորությամբ ու ներգործունությամբ տպավորիչ են նաև վերացական հասկացությունների, երևույթների և անշունչ առարկաների շնչավորման օրինակները, ինչպես՝

Ամայի դաշտում նստեմ միայնակ,

Սեռնող հուշերըս փայփայեմ ու լամ...

(Գիշեր ու հուշեր)

Գերպարանավորվել են բանաստեղծի հոգու երկու սրբեղեն մասունքները՝ կարոտը և հուշերը, որոնք ներամփոփ հույզերի ու ապրումների կրողներ են և արտացոլում են բանաստեղծի հոգեվիճակը: Անշունչ առարկաների շնչավորման հետաքրքիր դրսևորում է բանաստեղծական ներքոհիշյալ հատվածը.

Ոչ քարերը դարավոր,

Ոչ գրերն ավեր

Չեն պատմի քեզ վիշտը խոր

Եվ երկունքը մեր: (Երկիր Նաիրի)

Քարերը, գրերն ու զանգերը դառնում են պատմության ճշմարիտ վկաներ, խոսուն պատկերներ և բանաստեղծական խոսքն օժտում են արտահայտչականությամբ ու հուզականությամբ:

Վահան Տերյանը բնապաշտ արվեստագետ է, որն օժտված է բնության անզամ անտեսանելի թվացող երևույթների գույների խաղը որսալու զորեղ ունակությամբ: Նրա կախարդական գրչի հարվածներով շնչավորվում են ստեղծարար բնությունը, համայն տիեզերքը, իսկ այդ տիեզերքում թնածում է բանաստեղծի զգայուն ու լայնեզր հոգին:

Գանձայի հրաշք բնության երանգապնակի գունեղ նրբերանգներով Տերյանը արարեց նրբաճաշակ արվեստագետի վրձնին հատուկ բազմերանգ բնապատկերներ, որոնք նաև հույզի ու ներապրումի արտացոլման խորունկ ու խոսուն վկաներ են: